

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.08.2021թ. թիվ 2113209003 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 24 >> 08 2021թ. 7-13

12768

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Սարգիս Մնացականյանի ՄԴ/68059-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Տիգրան Մեծի պողոտայի 36Ե շենքի 25 բնակարանի բնակիչ Սարգիս Մնացականյանը դիմումով խնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին 13.08.2021թ. թիվ 2113209003 որոշումը՝ նշելով, որ տվյալ հատվածում երթևեկելի մասերի հատում չկա:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.08.2021թ. թիվ 2113209003 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ երթևեկելի մաս հասկացությունը ճանապարհի տարր է նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

«Կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին» 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է խաչմերուկներում, **երթևեկելի մասերի հատման վրա** և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում՝ բացառությամբ երթևեկելի մասերի եռակողմ հատման հոծ գծով կամ բաժանարար գոտիով առանձնացված կողմի վրա (շարունակություն չունեցող կողմի դիմաց):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.08.2021թ. թիվ 2113209003 որոշման հիմքում դրված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմումատուի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը 22.07.2021թ. Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի հատվածում կանգառ է կատարել երթևեկելի մասերի հատման վրա ժամը 13:05:51-րդ վայրկյանից 13:07:00-րդ վայրկյան, ինչի **ստևողությունը կազմել է 69 վայրկյան**, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Ինչ վերաբերվում է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2021թ. թիվ 2112942409 որոշմանը, ապա դրա հիմքի և առարկայի վերաբերյալ գոյություն ունի Ճանապարհային ոստիկանության կողմից ընդունված և ուժի մեջ մտած վարչական ակտ՝ «Վարչական տույժ նշանակելու մասին 30.06.2021թ. թիվ 2112942409 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին» 12.08.2021թ. թիվ 7-13-12228 որոշումը, ուստի, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, դիմումը դրա մասով վերանայման ենթակա չէ:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.08.2021թ. թիվ 2113209003 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Սարգիս Մնացականյանին:



Ե. Կարապետյան